Հովհաննես Զաքարյան («Տաթև» ԳԿՀ)

ԿԵՂԵՔԵԼ, ԽՈՂԽՈՂԵԼ, ՔԱԿ(Տ)ԵԼ, ԿԷՍ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, հ.-ե. *sek- «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատը և դրա՝ սղված, ապա զանազան աճականներով ընդլայնված, ձայնդարձի տարբեր աստիճաններով արտահայտված տարբերակները լայն տարածում ու ճյուղավորումներ ունեն ժառանգ լեզուներում, այդ թվում՝ հայերենում[1]: Ստորև կներկայացվեն այդ արմատից սերած մի քանի իմաստային բառափնջեր՝ ստուգաբանության նոր վարկածներով:

Հ.-ե. *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատը դուստր լեզուներում լայնորեն ճյուղավորվել է ոչ միայն ձևային, այլև իմաստային զարգացումներով: Ահա իմաստային զարգացման միայն մի ճյուղ՝ ըստ Յ. Պոկոռնու ներկայացրած նյութերի (տե՛ս գծանկարը):



Նշված իմաստային անցումների և գիտականորեն ճանաչված հնչյունական օրենքների սահմաններում են տեղավորվում չստուգաբանված կամ փոխառյալ համարվող հայերեն մի շարք բառեր, որոնք առաջարկում ենք բխեցնել հ.-ե. Վերոհիշյալ *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատից ու դրա ածանցյալներից: Այդ բառերը խմբավորված են ըստ իմաստային դաշտերի:

1. Կեղեքել, կողոպտել, կապտել, կորզել, շռալել, սկրթել, կնդել, կոփել

Այս խմբում հնխլ. *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատի իմաստային զարգացումները ներկայացնող մասնակիորեն հոմանիշ ածանցյալներ են:

---

[1]Ածանցյալների այդ հսկա բազմությանը կարելի է ծանոթանալ Յ. Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգաբանությունների բառարանում» [Պոկ.] և Ս. Նիկոլաևի «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» [Նիկ.] մասնավորապես ***sken-**«կտրել, պոկել», *(s)ken-(d-)- «մաշկել, ճեղքել», ***(s)ker-4**, **(s)kerə-**, **(s)krē-** «կտրել», ***(s)ker-p-** «կաշվի կտոր, կոշիկ», ***(s)keu-2**,**(s)keu̯ə**, **(s)kū-** «ծածկել, թաքցնել, փաթաթել, ծածկոց», *(s)keu-l- (kh-) «ծածկ, թաղանթ, կաշի, մորթի», *(s)ko-l- «կտրել» և այլ գլխաբառերի տակ:

Կեղեքել «1. կլպել, քերթել, մաշկել, պլոկել, 2. բզկտել, 3. գռփել, կողոպտել, հարստահարել, 4. չարչարել, տանջել» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են **կեղ**- «խոց, վերք, պալար» [<*gᵘel- «ծակել, ցավ, տանջանք, մահ»] (ՀԱԲ, 2, 567, ՀՍԲ, 397) արմատի ածանցյալ (<կեղ-եք-ել)։ Սակայն հայերենում առկա են այդ արմատի առնվազն ևս երկու համանուններ՝ **կեղ**- «ծուռ, թյուր, թերի» [<*skel- «ծռել, հենել»] (ՀՍԲ, 397), **կեղ(-եւ)** «կլեպ, մաշկ» [<*skel- «կտրել, անջատել, պլոկել, խլել»] (ՀՍԲ, 398)։ Կարծում ենք, որ ավելի ճիշտ կլիներ **կեղեքել**-ը դիտարկել որպես մեր նշած երրորդ համանուն **կեղ**- արմատի ածանցյալ՝ կապելով **կեղև, կլեպ** բառերի հետ։ Դրա հիմնավորումները հետևյալներն են։ 1. Առկա է **կեղանք** «լավացող վերքի վրայի չոր կեղև» (ԱՀԲԲ, 714) բառը, որը թեև իմաստաբանորեն առնչվում է **կեղ**- «խոց» արմատի հետ, սակայն ըստ էության ունի «կեղև» իմաստը, այսինքն՝ նույնանում է **կեղ**- «կտրել, պլոկել» արմատի հետ։ 2. Հայերենում և այլ լեզուներում «հարստահարել, թալանել, հափշտակել» իմաստը մեծ մասամբ փոխաբերական զարգացումն է «մաշկել, պլոկել» կամ «պոկել, խլել» իմաստով բառերի։ Օրինակ՝ **մաշկել** «1. քերթելով մաշկը հանել, 2. կեղևահան անել, 3. կեղեքել, հարստահարել» (ԱՀԲԲ, 970), **քերթել** «1. անասունի մորթը դանակով մսից բաժանել, մաշկել, 2. քերել, պլոկել, 3. կեղեքել, հարստահարել» (ԱՀԲԲ, 1565), **պլոկել, լոպկել** (դրափոխությամբ), «1. մորթը՝ կաշին քերթել՝ հանել, 2. կողոպտել, խլել, 3. կեղեքել, հարստահարել» (ԱՀԲԲ, 1217, 536), **կլպել** «1. կեղևել, կճպել, մաշկել, 2. ունեցած-չունեցածը խլել, կողոպտել» (ԱՀԲԲ, 738), **շորթել** «1. խլել, կորզել, 2. հափշտակել, գռփել» (ԱՀԲԲ, 1118), **տեռազերծել** «1. պլոկել, մերկացնել, մաշկահան անել, 2. կողոպտել» (Մալխ., 4, 401), **խուզել** «1. մազերը կտրել, 2. էտել, 3. գջլել, փողը՝ ունեցվածքը խլել» (ԱՀԲԲ, 616), **խլել** «1. խզել, անջատել, 2. ձեռքից առնել, 3. հափշտակել, շորթել» (ԱՀԲԲ, 580), **գջլ(տ)ել** «1. զզգզել, պատառոտել, 2. փրցնել, պոկել, խլել, 3. շորթել, հափշտակել» (Մալխ., 1, 471), **ձրձել** «1. քաշել, պոկել, 2. բզկտել, զզել, 3. կեղեքել, գողանալ, հափտակել» (Մալխ., 3, 182), **փրցնել** «1. պոկել, խլել, 2. հափշտակել» (ԱՀԲԲ, 1541), **գիշատել** «1. պատառոտել, հոշոտել, 2. հարստահարել, կեղեքել» (ԱՀԲԲ, 238), ռուս. **грабить** «1. խլել, 2. թալանել», **(рас)хищать** «1. խլել, պոկել, 2. գիշատել, 3. թալանել», անգլ. **rob** «1. խլել, 2. կողոպտել», **strip** «1. մաշկել, կլպել, 2. կողոպտել», **scrape** «1. կլպել, քերթել, 3. թալանել», **rifle**«1. պոկել, քերթել, 2. կողոպտել» և այլն։ Իմաստային նույն անցումը առկա է նաև **կեղեքել** բառի դեպքում։ Հետևաբար այս բառը կարելի է ստուգաբանել՝ բխեցնելով հնխլ. *ske-l- <*sek- «կտրել, ճեղքել»

արմատից։ Ի դեպ, չի բացառվում, որ **կեղ** «վերք, խոց», ինչպես և **խոց** [<*khot-sk-՝ *khai-t- «խփել, հրել, խթել»] (ՀՍԲ, 346) բառերը նույնպես կապված լինեն *sek- «կտրել, ճեղքել» արմատի հետ, ինչպես որ են նույնանշանակ անգլ. **cancer, canker, ֆր.** chancre բառերը (ՎԲԱ)։

Կողոպտել (<**կողոպուտ**[2]) «ավարել, թալանել, հափշտակել» բառը **կեղեքել**-ի երրորդ իմաստի հոմանիշներից է, ու թեև դրա համար վկայված չէ «պոկել, մաշկել» իմաստը, այնուամենայնիվ ձևի նմանության հիման վրա ենթադրում ենք, որ սա ևս <*(s)kel- «կտրել, անջատել, պլոկել, խլել» նախաձևի ձայնդարձային տարբերակի ածանցյալ է՝ *skolo-b- <*կողոպ-ուտ* կազմությամբ (-**ուտ** ածանցի համար հմմտ. *օգուտ, խրուտ, չորուտ, ջլուտ, խորշումուտ, սասանուտ* և այլն)։

Կապտել(<**կապուտ**[3]) «ավարել, թալանել, հափշտակել» բառը **կողոպուտ**-ի հոմանիշն է։ Երկուսն էլ ունեն **–ուտ** վերջածանցը։ Կարելի է ենթադրել, որ **կապուտ**-ը **կողոպուտ**-ի ձայնդարձային ***կաղապուտ** [*skələ-b- <**կաղապ-ուտ*] տարբերակի կրճատման հետևանքն է։ Այդ դեպքում նկատելի է *կեղեք-, կողոպ-, *կաղապ-* հիմքերի ձայնավորների ներդաշնակություն։

Կորզել «1. քաշելով պոկել, 2. մաշկը պլոկել, 3. խլել, 4. խոսք քաշել, 5. հափշտակել, փախցնել» բառը նույնպես ենթարկվել է իմաստային նշված զարգացմանը։ Կարծում ենք, որ սա ևս կարելի է համարել *sek- «կտրել, ճեղքել» արմատի ածանցյալ՝ **զ** աճականով [**կորզ-ել**<*skor-g՛h-], չնայած որ Գ. Ջահուկյանը բխեցրել է *gor-g՛h-՝*ger- «հավաքել, ի մի բերել» արմատից (ՀՍԲ, 423)։ Հ. Աճառյանն այս բառը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 647)։

Շոպել (շուպել) «1. պոկել, փրցնել, 2. կորզել, խլել, հափշտակել, հարստահարել, 3. ճողոպրել» (ՀԼՀԲ, 509) բառի դեպքում ևս առկա է իմաստային զարգացման գրեթե նույն բանաձևը։ Նաև նկատի ունենալով վերոհիշյալ **շոպկել** բառի հետ ձևային խիստ նմանությունը՝ կարծում ենք, որ սա ևս կարելի է համարել *sek- «կտրել, ճեղքել» արմատի ածանցյալ [**շոպել**<*skho-b-][4], չնայած որ Գ. Ջահուկյանը փոքր-ինչ այլ կարծիքի է՝ «հազիվ թե *skhob-՝ *kap- «բռնել»

---

[2]Այս բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 623), իսկ Գ. Ջահուկյանը խիստ կասկածով կապել է հնխլ. *gelb/gleb- «սեղմել» արմատի հետ (ՀՍԲ, 417)։

[3]Այս բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 526-527), իսկ Գ. Ջահուկյանը ենթադրել է փոխառություն իրանական աղբյուրից՝ հնխլ. *kap- »բռնել» նախաձևով (ՀՍԲ, 385), սակայն չի պարզաբանել –**ուտ** ածանցի խնդիրը, որի մասին նշել է Հ. Աճառյանը։

[4]Այստեղ ***b**-ն հնագույն աճական է, իսկ **շոպկել** բառի մեջ կա ևս մեկ՝ հայերենի ինքնուրույն զարգացման ընթացքում ավելացած **կ** աճականը։

բնաձայնական տիպի արմատից» (ՀՍԲ, 592-593՝): Հ. Աճառյանն այս բառը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 531):

Սկրթել (սկրդել, սկրտել) «1. քերել, պոճոկել, պոկել, 2. մորթը պլոկել, քերթել, 3. ճողոպրել, դուրս պրծնել, 4. սայթաքել, 5. կողոպտել, թալանել» (ՀԼԲԲ, 5, 362) բառի դեպքում ևս առկա է իմաստային զարգացման գրեթե նույն բանաձևը: Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 4, 232, ՀՍԲ, 684): Սակայն Գ. Ջահուկյանը նաև հնարավոր է համարել, որ այս բառը կապ ունենա **քերթել** բառի հետ: Մեկ այլ առիթով ևս Գ. Ջահուկյանը ակնարկել է այս բառի հնարավոր կապը հ.-ե. *(s)ker- «կտրել» արմատի հետ (Ջահ., 67): Նաև այս ենթադրությունը նկատի ունենալով՝ **սկրթել** բառի համար առաջարկում ենք հետևյալ ստուգաբանական բանաձևը. **սկրթել**<*սկիր-թ- <*սգիր- <*k´u̯ēr- <*(s)k´eu̯- <*sek- «կտրել, ճեղքել»[5]:

Կնդել (կունդել, կնտել)«1. փետել, փրցնել, 2. մազերը խոր կտրել, 3. սափրել, 4. բուրդը խուզել, 5. չարչարել, կեղեքել, հարստահարել» բառի դեպքում ևս առկա է իմաստային զարգացման գրեթե նույն բանաձևը: Այս բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 659): Գ. Ջահուկյանը այդ բառի **կունդ** «1. ճաղատ, հերաթափ, 2. գագաթը կտրած՝ խուզած (ծառ կամ ճյուղ)» արմատի մասին գրել է. «Հազիվ թե ծագի իրանական կորած մի արմատից, որ թերևս կարող է ծագել հնդեվրոպական *(s)ken-d- «պոկել, անջատել» արմատից» (ՀՍԲ, 427): Բայց պետք է նկատել, որ **կունդ** արմատը[6] անմիջականորեն կարող էր ծագել *(s)ken- արմատի այլ ձայնավորմամբ տարբերակից՝ **կունդ**<*skōn-dh- <*ske-n- <*sek- օրինաչափ անցմամբ, առանց իրանական միջնորդություն պահանջելու:

Կոփել «1. հասկերը ձեռքով պոկել, 2. ծեծել, չարչարել, խոշտանգել» և **կոփահարել** «1. բռնցքել, 2. հարստահարել» բառերի դեպքում ևս առկա է իմաստային զարգացման գրեթե նույն բանաձևը: Դրանց **կռուփ** «բռնցքած ձեռք, բռունցք, բռնցքի հարված» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 673): Գ. Ջահուկյանը կապել է հնխլ. *ger- >*g(ē)ru-ph- «պտտել, ոլորել» արմատի հետ (ՀՍԲ, 432): Առաջարկում ենք ստուգաբանության նոր վարկած՝ **կռուփ**<*կուռ-ուփ <*skōrsō-b- <*skō-r-s- <*sek- «կտրել, ճեղքել»:[7] Այս բառը ամենայն

---

[5]Այստեղ k´u̯> սգ > սկ անցման համար տե՛ս ՀԱԲ, 4, 230, Սկունդ, 228, Սկեսուր:

[6]Սրան համանուն են **կունդ** «1. գունդ, 2. անվի առանցքի գնդաձև մասը, 3. անդամալույծ» (ՀԼԲԲ, 3, 208-209) բառը, որ **գունդ** բառի տարբերակ է (ՀԱԲ, 1, 593-594), և **կունդ** «կոճղ», **կունդ** «քաջ» բառերը, որ համարվում են իրան. փոխառություն (ՀԱԲ, 2, 659-660):

[7]Իսկ **–ուփ** ածանցի համար հմմտ. *ուղ-ուփ* «խելք, ուշիմություն» (հմմտ. *ուղ-եղ*):

հավանականությամբ **կուռ(ն)** «թև» բառի ածանցյալ է, ինչպես որ **բռունցք** բառը **բուռ(ն)** «ձեռք,կռուփ» բառի ածանցյալն է (ՀԱԲ, 1,486)։ Իսկ **կուռն** բառը, ինչպես և դրա **ճուռն** տարբերակը և **ճիւ** հոմանիշը մեր մի հոդվածում բխեցրել ենք նույն՝ *skōr-s-no- <*sek- «կտրել, ճեղքել»նախաձևից(Զաք.-3, 234-235)։

2. Խողխողել, խոշոշել, խոշտանգել, քանցել

Հնխլ. *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատի իմաստային վերոհիշյալ զարգացումները ներկայացնող ածանցյալների շարքին հավելենք ևս մի քանի բառ։

Խողխողել (խոհխոհել) «1. խոցոտել, սրատել, կտրատել, 2. մորթել, փողոտել, խոշոշել, 3. կոտորել, 4. չարաչար սպանել» (ԱՀԲԲ, 592)։ Հ. Աճառյանն այս բառը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 389)։ Գ. Ջահուկյանը ստուգաբանության երկու տարբերակ է առաջարկել՝ հ.-ե. <*khol-՝ *(s)kel-՝ *sek- կրկնությամբ, կամ փոխառություն խեթերեն hulhuliia «կռվում սպանել» բառից (ՀՍԲ, 339)՝ ավելի հավանական համարելով երկրորդ վարկածը[8]։ Սակայն կարծում ենք, որ առաջին վարկածը ավելի համոզիչ է, եթե նկատի ունենանք հատկապես «խոցոտել, սրատել, կտրատել» նշանակությունը, որ ուղղակիորեն կապվում է հնխլ. *sek- արմատի հետ, և նույնարմատ ու նույնիմաստ **խոշոշել** բառը (տե՛ս ստորև), որը հնչյունական առումով չի կապվում խեթերեն նշված բառի հետ։ **Խոհխոհել** տարբերակի առաջացումը կարելի է բացատրել այսպես։ Առաջին **ղ**-ն **խ**-ի առնմանությամբ խլացել է, ապա **խ-h** անցմամբ դարձել **h** (**խ-h** անցման մասին տե՛ս Զահ., 73)։ Երկրորդ **ղ**-ն **h**-ի առնմանությամբ նույնպես դարձել է **h** [խողխող > խոխխող > խոհխող > խոհխոհ]։ Ինչ վերաբերում է խեթերեն բառին, ապա կարելի է ենթադրել հակառակ (հայերենից խեթերեն) փոխառություն։

Խոշոշել «փողոտել, մորթել, խողխողել» (ԱՀԲԲ, 594) բառը (և դրա **խոշոշ** «մարդասպան» արմատական ձևը) Հ. Աճառյանն ու Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 2, 395, ՀՍԲ, 341)։ Սակայն թե՛ իմաստը, թե՛ ձևը թույլ են տալիս բխեցնելու հնխլ. նույն արմատից, ինչ նախորդ բառը՝ տարբեր աճականով՝ **խոշոշ-ել**<*kho-k՛w- <*(s)keu- <*sek-՝ կիսակրկնությամբ։

Խոշտանգել (հոշտանգել) «1. կտտանքի ենթարկել, ծվատել, բզկտել, 2. տանջել, չարչարել» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 396-397)։ Գ.

---

[8]Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, *Արդյոք հայերն ապրե՞լ են Առաջավոր Ասիայում մ.թ.ա. 12-րդ դարից առաջ*, «Լեզու և լեզվաբանություն», հմ. 1, Ե., 2003, էջ 7։

Ջահուկյանը **խոշտանգ** բառը համարել է բարդություն՝ **խոշ-տանգ**, որի երկրորդ բաղադրիչը նույնացրել է **տանջ** «չարչար» արմատին, իսկ առաջինի ծագումը որևէ կերպ չի բացատրել (ՀՍԲ, 341)։ Կարծում ենք, որ առաջին բաղադրիչը նույն արմատն է, ինչ նախորդ (**խոշոշել**) բառինը։ Այսինքն՝ **խոշտանգել** նշանակում է «խոշելով (=ծվատելով) տանջել»։ Նույն արմատը առկա է նաև **խոշոր** («մեծակտոր») բառում (Զաք.-2, 87)։ Ի դեպ, կա նաև **օշ (աւշ, յօշ)** «մսի պատառ՝ կտոր» բառը (որից՝ **յօշել** «1. պատառոտել, կտրատել, 2. ճղել, կտրել, 3. մորթել», **յօշոտել** «պատառ-պատառ անել, բզկտել, ծվատել»), որի ստուգաբանությունը և ծագումնաբանական առնչությունը վերոհիշյալ բառերի հետ դեռևս պարզաբանված չեն (տե՛ս նաև ՀԱԲ, 4, 614, ՀՍԲ, 103, Աւշ)։

Քանցել «1. պատառոտել, բզկտել, 2. հոշոտել, գզել, 3. պոկոտել, քաշկոտել, 4. ձաղկել, հարվածել, 5. չարչարել» (Մալխ., 4, 547) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 4, 553, ՀՍԲ, 776)։ Բառի թե՛ իմաստները, թե՛ ձևը թույլ են տալիս առաջարկելու **քանց-ել**<*kən-sk- <*(s)ke-n- <*sek- ստուգաբանությունը։

3. Քակ(տ)ել, խախուտ, խարխալել

Բառերի այս խմբում նույնպես հնխլ. *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատի իմաստային վերոհիշյալ զարգացումներին համանման ածանցյալներ են։

Քակել «1. բաժանել, տրոհել, 2. անջատել, զատել, 3. տարրալուծել, կազմաքանդել» բառը մինչ այժմ համարվել է անհայտ ծագման (ՀԱԲ, 4, 538, ՀՍԲ, 773)։ Դրանից են ածանցված **քակտել** «1. քանդել, քայքայել, ավերել, փլուզել, 2. խզել, խախտել, կազմալուծել» (Հ. Աճառյանը **տ**-ն համարել է սաստկական մասնիկ), **քակված** «ճեղքվածք, ծերպ» (Մալխ., 4, 534), **քակուտ** «խախուտ, դյուրաքանդ» (Մալխ., 4, 534) և այլ բառեր։ **Քակ**- արմատի թե՛ իմաստը, թե՛ ձևը թույլ են տալիս նրան բխեցնելու հնխլ. նույն *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատից՝ հետևյալ բանաձևով. **քակ**- <*kə-g- <*(s)keu- <*sek-։

Խախուտ «անհաստատ, խարխուլ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել, սակայն համարել է պարզ բառ՝ նկատելով, որ **խախտ** սղված տարբերակը ածանցյալների մեջ լինում է թե՛ սկզբնաբաղադրիչ *(խախտել)*, թե՛ վերջնաբաղադրիչ *(անխախտ)* (ՀԱԲ, 2, 317)։ Գ. Ջահուկյանը համարել է կրկնավոր՝ *khə-khud-՝ *(s)keud- «նետել, շտապել, նետվել» հնխլ. արմատից։ Կարծիքների այս տարբերությունը տեղիք է տալիս նոր վերլուծությունների ու

վարկածների։ Այսպես, նկատի ունենալով այս բառի վերոհիշյալ **քակուտ** հոմանիշի կազմությունը (քակ-ուտ)՝ կարելի է կարծել նաև, որ **խախուտ** բառը ածանցավոր է՝ **խախ-** արմատով (-**ուտ** ածանցի մասին տե՛ս վերը)։ Մյուս կողմից՝ կարելի է ենթադրել, որ **խախտ**-ը ոչ թե **խախուտ**-ի սղված ձևն է, այլ **խախ**- արմատը՝ **տ** սաստկական մասնիկով (հմմտ. վերոհիշյալ **քակտ**- հիմքը)։ Այսպես օրինաչափորեն բացատրվում է **խախտ**-ի վերջնաբաղադրիչ լինելը, այլապես, ըստ Հ. Աճառյանի, դա օրինաչափությունից շեղում է՝ կեղծ ստուգաբանության (հետևաբար համաբանական վերականգնման) հետևանք։ Համենայն դեպս, հաշվի առնելով արմատի իմաստն ու ձևը, առաջարկում ենք **խախ**- <*khə-kh- <*(s)keu- <*sek- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը։ Հ. Աճառյանը վրաց. **խախուտի** բառը և դրա ածանցյալները համարել է ոչ թե փոխառություն հայերեն **խախուտ**-ից, այլ ենթադրել է դրանց «համամայր ծագում» (ՀԱԲ, 2, 317), որը, կարծում ենք, կարող է լինել նոստրատիկ ընդհանրության արդյունք։

Խարխալել (խարխարել, խարխլել, խարխիլ, խարխել, խլխլել, խոլխոլել) «խախտել, ավերել», այլև **խարխուլ (խարխուր, խարխլիկ, խլխլիկ, խլխլուկ, խլխլակ, խլխլոտ, խոլխոլա)** «քայքայված, խախտված» բառերը Հ. Աճառյանը համարել է կրկնավոր՝ ձայնդարձով ու հերթագայությամբ զուգակցված, սակայն արմատի ծագումը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 345-346)։ Գ. Ջահուկյանը դրանց **խար**- արմատը կապել է հնխլ. *khər-՝ *(s)ker- «պտտելով շարժել» արմատի հետ (ՀՍԲ, 321)[9], որ իմաստային առումով այնքան էլ համոզիչ չէ։ Նկատի ունենալով ձևային ու իմաստային նմանությունը **խախուտ**[10] բառին՝ ավելի հարմար ենք տեսնում *khə/kho/khō-r/l- <*(s)keu- <*sek- «կտրել, հատել, ճեղքել» ստուգաբանությունը (**r**-ն և **l**-ն աճականներ են)։ Աճականական ձևերում առկա են նաև **-իկ/-ուկ/-ակ, -ա(յ), -ոտ** ածանցները։ **Խարխիլ, խարխել** տարբերակները թերևս սեղմված (կրճատված) կիսակրկնություններ են (<խար-խար-իլ)։ Կրկնավոր չէ միայն **խոլել** ձևը (ՀԼԲԲ, 2, 298)։ Սրանց անշուշտ առնչվում է նաև **խարխութ** «կոտրատված, ջարդոտված» բառը (ՀԼԲԲ, 2, 298)՝ -**ութ** ածանցով, որ -**ուտ**-ի տարբերակ է (հմմտ. *մռութ/մռուտ*)։

---

[9]Գ. Ջահուկյանը նույն տեղում նշել է նաև ուրարտ. harharšu «քանդել» բայաձևի հետ **խարխարել**-ի նմանությունը՝ առանց հստակեցնելու դրանց հարաբերակցությունը։

[10]Ի դեպ, սա ունի նաև **խարխուտ** տարբերակը (ՀԱԲ, 2, 317), որ գուցե **խախուտ**-ի և **խարխուլ**-ի բաղարկության արդյունք է։

4. Կէս, խազ, կորի

Վերոհիշյալ *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատի ամենաուղղակի իմաստային զարգացումները ներկայացնող ածանցյալները մեծաքանակ են: Հիշենք դրանցից մի քանիսը. **ցել** «1. ճեղք, պատռվածք, 2. վարած ու անմշակ թողած հող»[<*sk´el-] (ՀԱԲ, 4, 452), **քերթել** «մորթը կտրել-հանել» [<*(s)ker-թ], **քերփել** «կեղեքել» [<*(s)ker-փ] (ՀԱԲ, 4, 572), **ցիտ** «մարմինը բզկտված՝ պատառոտված՝ կտրտված»[<*sk´(h)id-] (ՀԱԲ, 4, 455), **շարշլել** «պատառոտել» [*skhər-] (ՀՍԲ, 583), **կոփ (կուփ)** «տաշել, խփել, կռել» [*skeph-] (ՀՍԲ, 430), **խեղեփ** «1. կես, 2. ընկույզի միջուկ» [<*(s)khel-eph-] (ՀՍԲ, 326), **խուզել (խոյզ)** «կտրել, հնձել» [<*(s)kheu-g´h-] (ՀՍԲ, 346), **խզել (խուզ)** «պոկել, կտրել» [<*(s)khu-g´h-] (ՀՍԲ, 328), **խիզար** «կտրիչ, մեծ սղոց» [<*(s)khēi-g´h-] (ՀՍԲ, 329), **խիլ (խլել)** «1. փնտրտուք, զննություն, 2. անջատում, խզում» [<*(s)khēl-] (ՀՍԲ, 330), **խոփ (խոբն)** «բահի՝ արորի՝ գութանի կտրող մաս» [<*(s)khopho-] (ՀՍԲ, 350), **խրամ** «փոս, առու, ճեղք» [<*(s)khrəm-] (ՀՍԲ, 354), **շորթել** «խլել, կորզել, հափշտակել» [*skhort-] (ՀՍԲ, 593), **շոպկել** «մաշկել, պլոկել, փրցնել» [*skhōb-] (ՀԼՊ ՆԺ, 148), **ցլեպ (ցլեփ)** «փոքր սրածայր բեկոր» [<*sk´(ē)leb-] (ՀԼՊ ՆԺ, 148), **ցաքատ** «ծառի մեծ դանակ» [<*sk´ak-] (ՀԼՊ ՆԺ, 130), **շեղբ** «դանակի՝ սրի բերան» [<*(s)qel(e)p-] (Աղ., 126-127), **ճեղ(ք)** «ճաք, բացվածք, պատռվածք, արանք» [<*sqel-], **ճղել** «պատռել» [<*sqēl-] (Աղ., 113-115), **կիրճ** «խորաձոր» [<*skēr-d-io-] (Զաք.-1, 90), **կիճ** «քարի ծերպ» [<*skeu-d-io-] (Զաք.-2, 85), **կոտոր/կտոր/կտրել** «հատել» [<*sko-t-] (Զաք.-1, 89-90), **կրկտել** «քրքրել, փորփրել, պրպտել, տնտղել, փնտրտել, խուզարկել» [<*skē-r-] (Զաք.-2, 89), **քարթ (քառթ)** «խազ, կտրվածք, քերծվածք» [<*(s)kər-t-] (Զաք.-1, 90)[11], լատ. scapula «բահ», ռուս. копать «փորել, քանդել» [<*(s)kape-] (ՎԲՌ, копать), հուն. κοπίς «դաշույն», ռուս. копьё «նիզակ» (ՎԲՌ, копьё) և այլն: Այս շարքին կարելի է ավելացնել հետևյալ բառերը:

Կէս (>կիսել) բառը մինչ այժմ համարվել է անհայտ ծագման, չնայած Գ. Ջահուկյանը կասկած ունի, թե դա կարող է և ենթաշերտային ծագում ունենալ (ՀՍԲ, 403): Բայց եթե նկատի ունենանք, որ կեսը ամբողջի՝ երկու մասի բաժանված հատվածներից յուրաքանչյուրն է, այսինքն՝ որևէ բան կիսել կարելի է կտրել-հատել-բաժանելով, ապա **կէս** բառը իմաստաբանորեն տրամաբանական է կապել *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատի հետ՝ բառի ձևավորման համար

[11]Տե՛ս նաև **Ն. Սիմոնյան**, *Ստուգաբանական դիտարկումներ*, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», 2016, հմ. 1, էջ 26-32:

ենթադրելով <*skē-k´- <*skeu- <*sek- բանաձևը։ Ի դեպ, «բաժին, հատված» իմաստի հետ են կապված նաև ռուս. половина «կես» (ՎԲՌ), անգլ. **half**«կես» (ՎԲԱ) բառերը։

Խազ «գիծ, գիր, քերծվածք, բարակ փորվածք՝ ճեղք» բառը Հ. Աճառյանը համարել է կովկասյան փոխառություն (ՀԱԲ, 2, 310)։ Գ. Ջահուկյանը համակարծիք է՝ որոշ կասկածով (ՀՍԲ, 307)։ Այդ կասկածը, ինչպես նաև վերոհիշյալ **խուզել** (խոյզ), **խզել (խուզ)** «կտրել» և **խիզար** «մեծ սղոց» բառերի հետ թե՛ ձևային, թե՛ իմաստային նմանությունը նկատի ունենալով՝ առաջարկում ենք այս **խազ** «քերծվածք, ճեղք, փորվածք» բառը նույնպես կապել հնխլ. *(s)keu-՝ *sek- «կտրել, ճեղքել» արմատի հետ՝ որպես ձայնդարձային այլ ձև՝ **խազ**<*kheu-g´h-[12] բանաձևով։ Կովկասյան բառերի հետ նմանությունը կարելի է համարել նոստրատիկ ընդհանրության դրսևորում։

Կորի (բրբռ. **կուրէ, կօռի, գորի**)«1. ակոս, ածու, 2. արտի առու, փոքր ջրանցք» բառը Գ. Ջահուկյանը, հետևելով Յ. Պոկոռնուն, կապել է *geu- «ծռել, կամար կազմել» արմատին (ՀՍԲ, 423)։ Հ. Աճառյանը Պոկոռնու այդ կարծիքը հավաստի չի համարել (ՀԱԲ, 2, 648)։ Այս տարակարծությունը նկատի ունենալով՝ առաջարկում ենք **կորի** բառը բխեցնել *skoriio- <*skor-/*sker- <*skeu-ro- <*sek- «կտրել, հատել, ճեղքել» նախաձևից։ Իմասային հիմնավորումն այն փաստն է, որ արտի մեջ մարգի ակոս կամ առու փորում են՝ բահի, արորի կամ գութանի խոփով հողը կտրել-ճեղքելով։

Համառոտագրություններ

ՀԱԲ – **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979

ՀԼՀԲ – **Ա. Սուքիասյան**, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967

ԱՀԲԲ – **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան,* Ե., 1976

Աղ. – **Է. Աղայան**, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974

ՀԼԲԲ – *Հայոց լեզվի բարբառային բառարան,* հհ. Ա-Է, Ե., 2001-2012

Մալխ. – **Ս. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945

---

[12]Այս բանաձևի *g´h> **q** համապատասխանության համար հմմտ. **խուզ**<*kheu-g´h- (ՀՍԲ, 246, խուզ), **կուզ**<*gug´h- (ՀՍԲ, 402, կզակ), **կէզն** «զառիվայր» <*geig´h- (ՀՍԲ, 402, կէզն), **եզ(ակի)**<*sem-g´h- (ՀՍԲ, 209, եզ), **եզն**<*eg´h- (ՀՍԲ, 209, եզն), **տիզ**<*dig´h- (ՀՍԲ, 729, տիզ) և այլն։

Նիկ. – **S. Nikolaev**,*Database of Indo-European etymology* (http://starling.-rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first)

Պոկ. – **J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch.* Bern-München, 2005 (http://dnghu.org/indoeuropean.html)

ՀՍԲ –**Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010

ՀԼՊ ՆԺ –**Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987

Ջահ. – **Գ.Ջահուկյան**, *Հայերենի անհայտ ծագման բառարմատները*, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, հմ. 2, էջ 62-77

ՎԲԱ – Wiktionary (https://en.wiktionary.org/wiki)

ՎԲՌ – Викисловарь (https://ru.wiktionary.org/wiki)

Զաք.-1 – **Հ. Զաքարյան**, *Կարիճ, կարճ, կիրճ* և մի քանի այլ բառերի ստուգաբանություն, «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» IV միջազգային գիտաժողովի (Վանաձոր) գիտական նյութերի ժողովածու, Ե., 2016, էջ 87-91

Զաք.-2 – **Հ. Զաքարյան**, *Խխունջ, քրքիր, կոպիտ* և մի քանի այլ բառերի ստուգաբանություն, «Աբեղյանական ընթերցումներ - 2» հանրապետական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2018, էջ 79-93

Զաք.-3 – **Հ. Զաքարյան**, *ճ* սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն, «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), 2019, Գյումրի, էջ 228-238

ОГАНЕС ЗАКАРЯН – Этимология армянских слов կեղեքել, խողխողել, քակ(տ)ել, կէս и некоторых других слов.

Армянские слова կեղեքել, խողխողել, քակ(տ)ել,կէս и т. д. считаются заимствованными или же не этимологизированными. В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются их новые этимологии, согласно которым данные слова являются исконно армянскими словами индоевропейского происхождения. Эти этимологии: կեղեքել"1. терзать, 2. угнетать"<*ske-l- "резать", խողխողել"исколоть" <*khol-<*ske-l- "резать", քակ(տ)ել"1, развязать, 2, разрушить"<*kə-g- <*(s)keu- <*sek-"резать, раскалывать",կէս"половина" <*skē-k´- <*(s)keu- <*sek-"резать, раскалывать"и т. д.

HOVHANNES ZAKARYAN – Etymologyof Armenian Wordsկեղեքել, խողխողել, քակ(ս)ել, կէսand Several Other Words.

Armenian words կեղեքել, խողխողել, քակ(ս)ել,կէս etcare notetymologized or are considered to beborrowings. The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward new etymologies for them as native Armenian words of I. E. origin. They are: կեղեքել"to rankle, to oppress"<*ske-l- "to cut", խողխողել"to stab" <*khol-<*ske-l- "to cut", քակ(ս)ել "1.to untie, 2.to destroy"<*kə-g- <*(s)keu- <*sek-"to cut, to split",կէս"half" <*skē-k´- <*(s)keu- <*sek-"to cut, to split"etc.